ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/49

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի 29.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.03.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել էր հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի Արաբկիրի վարչական շրջանի թվով 3 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ մրցույթ):

Մրցույթի հրավերի 1.1 կետով գնման առարկա է հանդիսանում՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ «Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի թվով 3 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք):

Ընթացակարգի 1-ին չափաբաժնով սահմանվել են Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ն. Դումանի 1 փողոցի բազմաբնակարան շենքի թեք տանիքի վերանորոգման աշխատանքները, 2-րդ չափաբաժնով՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի 38 փողոցի բազմաբնակարան շենքի թեք տանիքի վերանորոգման աշխատանքները, իսկ 3-րդ չափաբաժնով՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 22 փողոցի բազմաբնակարան շենքի թեք տանիքի վերանորոգման աշխատանքները:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները /ներկայացվում են նաև գնային առաջարկները/.

1-ին չափաբաժին

Հ/Հ	Անվանումները	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
	Էլդոգար ՍՊԸ	3219000	643800	3862800
	Կարպ-Գազ-Ռադ ՍՊԸ			
	Բիլդինգ Գրուպ ՍՊԸ	3233333	646667	3880000
	Ագարակ ԲԲԸ	3750000	750000	4500000
	Աբակ ՍՊԸ	4500000	900000	5400000
	ԳԱՄՇԻՆ ՍՊԸ	4125000	825000	4950000
	ՍՄԱԼԱ ՍՊԸ	4487625	897525	5385150
	Ռազովալո ՍՊԸ	4240000	-	4240000
	Արտյոմ Մինասյան ՍՊԸ	3552675	710535	4263210
	ԱՐԳՈՀՇԻՆ ՍՊԸ			
	Լուսի-Արեգ ՍՊԸ	4675000	935000	5610000
	ՍԱՍՈՒՆԱՍԱՐ ՍՊԸ	4166665	833333	4999998
	Բիդեք ՍՊԸ	4830000	966000	5796000
	ԱՐԹՄԱՇԻՆ ՍՊԸ	5083333	1016667	6100000
	Արարատշին ՍՊԸ	3908000	781600	4689600
	ԱՐԹ-ԿԱՐՇԻՆ ՍՊԸ	9128334	1825666	10954000
	Վանդաժի ՍՊԸ	4125000	825000	4950000
	Աննա 80 ՍՊԸ	3300000	660000	3960000
	ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ	4166667	833333	5000000
	ՍՏՐՈՅ ՍՊԸ	3345000	669000	4014000
	Արամա Սթոուն Սթայլ ՍՊԸ			
	Մեծ Հիմք ԱԿ	3889000	777800	4666800
	ԱՐՍԵՎ ՍՊԸ			
		4100000	820000	4920000
		5395860	1079172	6475032

2-րդ չափաբաժին

Հ/Հ	Անվանումները	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
	Էլդոգար ՍՊԸ	5772000		
	Կարպ-Գազ-Ռադ ՍՊԸ	4910000		
	Բիլդինգ Գրուպ ՍՊԸ	6666667	1154400	6926400
	Ագարակ ԲԲԸ	5750000	982000	5892000
	Աբակ ՍՊԸ	6160000	1333333	8000000
	ԳԱՄՇԻՆ ՍՊԸ	6480000	1150000	6900000
	ՍՄԱԼԱ ՍՊԸ	6960125	1232000	7392000
	Ռազովալո ՍՊԸ	-	1296000	7776000
	Արտյոմ Մինասյան ՍՊԸ	6721214	1392025	8352150
	ԱՐԳՈՀՇԻՆ ՍՊԸ		-	-
	Լուսի-Արեգ ՍՊԸ	7235000	1344243	8065456
	ՍԱՍՈՒՆԱՍԱՐ ՍՊԸ	7166665		
	Բիդեք ՍՊԸ	7300000	1447000	8682000
	ԱՐԹՄԱՇԻՆ ՍՊԸ	7891666	1433333	8599998
	Արարատշին ՍՊԸ	7250000	1460000	8760000
	ԱՐԹ-ԿԱՐՇԻՆ ՍՊԸ	5416667	1578334	9470000
	Վանդաժի ՍՊԸ	6335000	1450000	8700000
	Աննա 80 ՍՊԸ	-	1083333	6500000
	ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ ՍՊԸ	7083333	1267000	7602000
	Արամա Սթոուն Սթայլ ՍՊԸ	-	-	-
	Մեծ Հիմք ԱԿ		1416667	8500000
	ԱՐՍԵՎ ՍՊԸ	6640000	-	-
		7490000	1328000	7968000
		8368645		
			1498000	8988000
			1673729	10042374

3-րդ չափաբաժին

Հ/Հ	Անվանումները	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
	Էլդոգար ՍՊԸ	4329000		
	Կարպ-Գազ-Ռադ ՍՊԸ	3750000		
	Բիլդինգ Գրուպ ՍՊԸ	4158333	865800	5194800
	Ագարակ ԲԲԸ	5250000	750000	4500000
	Աբակ ՍՊԸ	5750000	831667	4990000
	ԳԱՄՇԻՆ ՍՊԸ	5590000	1050000	6300000
	ՍՄԱԼԱ ՍՊԸ	6152947	1150000	6900000
	Ռազովալո ՍՊԸ	-	1118000	6708000
	Արտյոմ Մինասյան ՍՊԸ	4760291	1230589	7383536
	ԱՐԳՈՀՇԻՆ ՍՊԸ		-	-
	Լուսի-Արեգ ՍՊԸ	6400000	952058	5712350
	ՍԱՍՈՒՆԱՍԱՐ ՍՊԸ	6038330		
	Բիդեք ՍՊԸ	6500000	1280000	7680000
	ԱՐԹՄԱՇԻՆ ՍՊԸ	6982500	1216666	7299996
	Արարատշին ՍՊԸ	5330000	1300000	7800000
	ԱՐԹ-ԿԱՐՇԻՆ ՍՊԸ	7883333	1396500	8379000
	Վանդաժի ՍՊԸ	5832500	1066000	6396000
	Աննա 80 ՍՊԸ	4600000	1576667	9460000
	ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ	5833333	1166500	6999000
	ՍՏՐՈՅ ՍՊԸ	4385000	920000	5520000
	Արամա Սթոուն Սթայլ ՍՊԸ		1166667	7000000
	Մեծ Հիմք ԱԿ	4908000	877000	5262000
	ԱՐՍԵՎ ՍՊԸ			
		5400000	981600	5889600
		7358495		
			1080000	6480000
			1470699	8830194

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում՝ դրա փոխարժեքը, իսկ 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Մրցույթի հրավերի 5.1. կետի համաձայն՝ առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի ՄԱՍ 2-ի 3-րդ կետի 2.8 ենթակետի համաձայն՝ գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 273-Ն հրամանով հաստատվել է բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները՝ համաձայն հավելվածի:

Թիվ 273-Ն հրամանի հավելվածի 4.2.9. կետի համաձայն՝

• Շենքերի, շինությունների և դրանց համալիրների նախահաշվային արժեքի որոշման համար կազմվում են նախահաշվային փաստաթղթեր՝ համաձայն նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների և ձևերի:

• Շինարարության արժեքը որոշվում է գործող նախահաշվանորմատիվային բազայի հիման վրա:

ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 812-Ն որոշմամբ ամրագրվել է, որ նախահաշվային փաստաթղթերը անցնում են համապատասխան պարտադիր փորձաքննություն:

ՀՀ կառավարության 23 հունիսի 2011թ. 879-Ն որոշման՝ «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեում վերաբաշխում և ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 23-ի 1748-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու և ՀՀ քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին» 3-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել հաստատել գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը՝ համաձայն N 8 հավելվածի:

ՀՀ կառավարության 23 հունիսի 2011թ. 879-Ն որոշման 8-րդ հավելվածով՝ հաստատվել է գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը:

Վերոհիշյալ հավելվածի 1-ին կետի համաձայն՝ գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ» նորմատիվատեխնիկական փաստաթղթի (այսուհետ՝ կարգի) կիրառումը տարածվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Շինարարության ոլորտում գնագոյացման նորմերի և նորմատիվների կիրառումն ապահովելու մասին» N 1484-Ն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության սուբյեկտների և/կամ մասնակիցների (այդ թվում՝ կառուցապատողների, քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների, շինարարություն իրականացնողների, քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողների) վրա:

Հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ շինարարական աշխատանքների արժեքի կառուցվածքը ներկայացվում է հետևյալ բանաձևով՝

Ա = Ծ + Շ + Հ

որտեղ՝

Ա՝ արժեքն է

Ծ՝ ծախսերն են

Շ՝ շահույթն է

Հ՝ հարկերն են

6. Շինարարական աշխատանքների արժեքում ծախսերի կառուցվածքը՝ ելնելով շինարարական նորմերից, բաղկացած է.

Ծ = Ծու + Ծվ + Ծայլ (2)

որտեղ՝

Ծ՝ շինարարական աշխատանքների արժեքում հաշվի առնված ծախսերն են

Ծու՝ ուղղակի ծախսեր

Ծվ՝ վերադիր ծախսեր

Ծայլ՝ այլ ծախսեր:

Երևանի քաղաքապետարանը՝ Երևան քաղաքի Արաբկիրի վարչական շրջանի թվով 3 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթ՝ հրավերին կից ներկայացրել է նաև շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների նախահաշիվները:

Այսպես, մրցույթի առաջին չափաբաժնով՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ն.Դումանի 1 փողոցի բազմաբնակարան շենքի թեք տանիքի վերանորոգման աշխատանքների համար հրավերով նախատեսվել է հետևյալ նախահաշվային արժեքը՝ ընդամենը՝ 4,623,700 ՀՀ դրամ, ներառյալ վերադիր ծախս՝ 5,238,700 ՀՀ դրամ, իսկ ներառյալ շահույթ՝ 5,814,900 ՀՀ դրամ:

Այսպիսով, ըստ տվյալ վերանորոգման աշխատանքների համար հաշվարկված և փորձաքննություն անցած նախահաշվի՝ առաջին չափաբաժնով նախատեսված աշխատանքի ինքնարժեքը կազմում է 5,238,700 ՀՀ դրամ (արժեքը ներառյալ վերադիր ծախսը՝ հանած շահույթի գումարը):

Մրցույթի երկրորդ չափաբաժնով՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի 38 փողոցի բազմաբնակարան շենքի թեք տանիքի վերանորոգման աշխատանքների համար հրավերով նախատեսվել է հետևյալ նախահաշվային արժեքը՝ ընդամենը՝ 7,171,200 ՀՀ դրամ, ներառյալ վերադիր ծախս՝ 8,124,900 ՀՀ դրամ, իսկ ներառյալ շահույթ՝ 9,018,700 ՀՀ դրամ:

Այսպիսով, ըստ տվյալ վերանորոգման աշխատանքների համար հաշվարկված և փորձաքննություն անցած նախահաշվի՝ երկրորդ չափաբաժնով նախատեսված աշխատանքի ինքնարժեքը կազմում է 8,124,900 ՀՀ դրամ (արժեքը ներառյալ վերադիր ծախսը՝ հանած շահույթի գումարը):

Մրցույթի երրորդ չափաբաժնով՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 22 փողոցի բազմաբնակարան շենքի թեք տանիքի վերանորոգման աշխատանք-ների համար հրավերով նախատեսվել է հետևյալ նախահաշվային արժեքը՝ ընդամենը՝ 6,279,060 ՀՀ դրամ, ներառյալ վերադիր ծախս՝ 7,114,170 ՀՀ դրամ, իսկ ներառյալ շահույթ՝ 7,896,730 ՀՀ դրամ:

Այսպիսով, ըստ տվյալ վերանորոգման աշխատանքների համար հաշվարկված և փորձաքննություն անցած նախահաշվի՝ երրորդ չափաբաժնով նախատեսված աշխատանքի

ինքնարժեքը կազմում է 7,114,170 ՀՀ դրամ (արժեքը ներառյալ վերադիր ծախսը՝ հանած շահույթի գումարը):

Սակայն մրցույթի չափաբաժիններով հայտեր ներկայացրած բազմաթիվ մասնակիցների գնային առաջարկների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններիս կողմից գնային առաջարկներով ներկայացրած անգամ արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) պակաս է, քան տվյալ աշխատանքի ինքնարժեքը, ինչը չի կարող գոյություն ունենալ:

Այսպես, առաջին չափաբաժնով նախատեսված աշխատանքի ինքնարժեքը կազմում է 5,238,700 ՀՀ դրամ, մինչդեռ ընկերությունները որպես արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար) ներկայացրել են, օրինակ, հետևյալ գները՝ 3,219,000, 3,750,000, 4,125,000, 3,552,675 և այլն:

Նույն իրավիճակն է տիրում նաև մրցույթի մյուս չափաբաժինների մասով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և մրցույթի Հրավերի 5.1. կետի պահանջներով՝ պետք է առնվազն մերժեր այն ընկերությունների հայտերը, որոնց գնային առաջարկով ներկայացրած արժեքի գինը պակաս է հրավերին կից աշխատանքների նախահաշվով նախատեսված աշխատանքների ինքնարժեքից:

Հակառակ դեպքում կստացվի, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի և մրցույթի Հրավերի 5.1. կետի պահանջների խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդից խնդրում եմ պարտավորեցնել «ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել մրցույթի այն մասնակիցների հայտերը, որոնց գնային առաջարկներով ներկայացրած արժեքի գումարը պակաս է հրավերին կից համապատասխան չափաբաժիններով նախատեսված աշխատանքների նախահաշիվներով ամրագրված աշխատանքների ինքնարժեքի գումարից»:

Ընկերությունը 10.04.2018թ. ներկայացրել է բողոքի լրացում, որով, մասնավորապես, հայտնել է հետևյալը.

««ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից 29.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի քննության է ներկայացվել թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/49 բողոքը, որով Ընկերությունը խնդրել էր պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող

հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել մրցույթի այն մասնակիցների հայտերը, որոնց գնային առաջարկներով ներկայացրած արժեքի գումարը պակաս է հրավերին կից համապատասխան չափաբաժիններով նախատեսված աշխատանքների նախահաշիվներով ամրագրված աշխատանքների ինքնարժեքի գումարից:

Սույն գրությամբ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն ցանկանում է կատարել 29.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքով պահանջի փոփոխություն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել հայտերի վերագնահատում և մերժել մրցույթի այն մասնակիցների հայտերը, որոնց գնային առաջարկներով ներկայացրած արժեքի գումարը պակաս է հրավերին կից համապատասխան չափաբաժիններով նախատեսված աշխատանքների նախահաշիվներով ամրագրված աշխատանքների ինքնարժեքի գումարից» պահանջը վերաշարադրել հետևյալ կերպ. «պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել նշված մրցույթը»:

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր պահանջը, այն է՝ պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել նշված մրցույթը, հիմնված է հետևյալ իրավական դրույթների և եզրահանգումների վրա.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում՝ դրա փոխարժեքը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը

և համեմատումն իրականացվում են առանց նույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 23 հունիսի 2011թ. 879-Ն որոշման՝ «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության 2011թ.պետական բյուջեում վերաբաշխում և ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 23-ի 1748-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու և ՀՀ քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին» 3-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել հաստատել գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը՝ համաձայն N 8 հավելվածի:

Նույն որոշման N 8 հավելվածի 25-րդ կետի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության համար շահույթը սահմանել առավելագույնը 11 %:

Գտնում ենք, որ նման պայմաններում առկա է հակասություն օրենքի և ենթաօրենսդրական ակտերի միջև: Մասնավորապես, Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ ենթակետը սահմանում է, որ հրավերը պետք է պարունակի հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, մինչդեռ ենթաօրենսդրական ակտի՝ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է միայն արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Դրա հետ միաժամանակ, շինարարական ծրագրերի դեպքում ոլորտում գերակայություն ունեցող մեկ այլ ենթաօրենսդրական ակտով, այն է՝ ՀՀ կառավարության 23 հունիսի 2011թ. 879-Ն որոշմամ սահմանված են գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման յուրովի կարգ, և նման պայմաններում «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը զրկված է եղել ստուգելու մրցույթին մասնակցած անձանց գների հաշվարկման կարգի համապատասխանությունը ՀՀ կառավարության 23 հունիսի 2011թ. 879-Ն որոշման պահանջներին:

Արդյունքում կարող են խախտվել ՀՀ կառավարության 23 հունիսի 2011թ. 879-Ն որոշման պահանջները, որը իր հերթին կարող է հանգեցնել Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, ինչպես նաև գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրում ենք հիմք ընդունել վերը նշված գրությունը և որպես 29.03.2018թ.ներկայացրած բողոքի միակ պահանջ դիտարկել հետևյալ պահանջը. «պարտավորեցնել «ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել նշված մրցույթը»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության ներկայացուցիչ Ռաֆայել Ավետիսյանը, ինչպես նաև Ընկերության շահերի պաշտպանության կապակցությամբ Բողոքի քննությանը ներգրավված «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից 29.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ 05.04.2018թ. թիվ 02/61-2352 հ գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի թվով 3 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթ:

Ընկերությունը ներկայացված բողոքով Գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել վերագնահատում և մերժել մրցույթի այն մասնակիցների հայտերը, որոնց գնային առաջարկներով ներկայացրած արժեքի գումարը պակաս է հրավերին կից համապատասխան չափաբաժիններով նախատեսված աշխատանքների նախահաշիվներով ամրագրված աշխատանքների ինքնարժեքի գումարից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ, չեն պահանջվում և ներկայացվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Կարգի 10-րդ կետի համաձայն՝ նույն կարգի իմաստով շինարարական ծրագրերը ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա իրականացվող բոլոր տիպի շինարարական աշխատանքները:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերը կազմելիս հիմք է ընդունվում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմված և հրապարակված շինարարության ինֆորմացիոն տեղեկագրում ներառված կողմնորոշիչ գները, որով ձևավորվում է շինարարական աշխատանքների ինքնարժեքը, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ որևէ իրավանորմ, որով մասնակիցների գնային առաջարկները պետք է պակաս լինեն շինարարական աշխատանքների նախահաշվով սահմանված ինքնարժեքից, ուստի այս պարագայում մասնակիցը ինքն է որոշում՝ ինչքան է կազմում իր կողմից գնային առաջարկով ներկայացվելիք արժեքը, որի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ, չեն պահանջվում և ներկայացվում:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի թվով 3 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ՝ օրենքով սահմանված պահանջների շրջանակներում»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Գագիկ Հուրոյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի 29.03.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի

(այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.03.2018թ. հայտերի բացման նիստերի N 2 արձանագրությունը, Պատվիրատուի 05.04.2018թ. թիվ 02/61-2352h գրությամբ Բողոքի վերաբերյալ հայտնած դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի թվով 3 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ մրցույթ), հրավերին կից ներկայացնելով նաև շենքերի թեք տանիքների վերանորոգման աշխատանքների նախահաշիվները:

Մրցույթին հայտ են ներկայացրել թվով 22 կազմակերպություններ, որոնց թվում է եղել նաև «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն:

21.03.2018թ. հայտերի բացման նիստերի N 2 արձանագրության 3.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են բավարար, բացառությամբ կազմակերպություններից մեկի՝ «Արարատշին» ՍՊԸ-ի հայտի, որը գնահատվել է անբավարար:

Նույն արձանագրության 4-րդ կետով Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ 1-ին չափաբաժնի մասով «Էլդոգար» ՍՊԸ-ին (5,194,800 ՀՀ դրամ ընդհանուր գնային առաջարկ ներկայացրած), իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ին (համապատասխանաբար 5,194,800 ՀՀ դրամ և 4,500,000 ՀՀ դրամ ընդհանուր գնային առաջարկ ներկայացրած):

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերության կողմից ուսումնասիրվել են Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ներկայացված վերանորոգման աշխատանքների համար հաշվարկված և փորձաքննություն անցած նախահաշիվները, ինչի արդյունքում բողոքաբերը պարզել է, որ նշված աշխատանքների նախահաշվով՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնով նախատեսված աշխատանքների ինքնարժեքները կազմել են համապատասխանաբար 5,238,700 ՀՀ դրամ, 8,124,900 ՀՀ դրամ և 7,114,170 ՀՀ դրամ (արժեքը ներառյալ վերադիր ծախսը՝ հանած շահույթի գումարը): Ուսումնասիրելով նաև Ընթացակարգի հանձնաժողովի կողմից բավարար գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները և հայտնաբերելով, որ դրանցով ներկայացված արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) պակաս է, քան տվյալ աշխատանքի նախահաշվային ինքնարժեքը, Ընկերությունը հիշյալ հանգամանքը որակել է որպես գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մի շարք դրույթների, մասնավորապես «Գնումների մասին» ՀՀ

օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև մրցույթի Հրավերի 5.1. կետի, պահանջների խախտում, ուստի և պահանջել է Խորհրդից՝ պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին մերժել այն ընկերությունների հայտերը, որոնց գնային առաջարկով ներկայացրած արժեքի գինը պակաս է հրավերին կից նախահաշվով նախատեսված աշխատանքների ինքնարժեքից:

Այնուհետև, 10.04.2018թ. Ընկերությունը Խորհրդին է ներկայացրել է բողոքի լրացում, որով հայտնել է, որ, վերլուծելով գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 23 հունիսի 2011թ. 879-Ն որոշման N 8 հավելվածով հաստատված՝ գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը, եկել է եզրահանգման, որ առկա է հակասություն Օրենքի և վերը նշված ենթաօրենսդրական ակտերի միջև, ուստի նման պայմաններում «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը զրկված է եղել մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված գների հաշվարկման կարգի համապատասխանությունը ՀՀ կառավարության 23 հունիսի 2011թ. 879-Ն որոշման պահանջներին ստուգելու հնարավորությունից: Հաշվի առնելով վերոգրյալը՝ և մտահոգություն հայտնելով, որ ստեղծված իրավիճակում կարող են խախտվել ՀՀ կառավարության 23 հունիսի 2011թ. 879-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջները, որը իր հերթին կարող է հանգեցնել Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացում հատուցման համարժեքության, ինչպես նաև գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքների խախտմանը, բողոքաբեր ընկերությունը Խորհրդին խնդրել է որպես 29.03.2018թ. ներկայացրած բողոքի պահանջ դիտարկել հետևյալ պահանջը. «պարտավորեցնել «ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել նշված մրցույթը»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ նաև՝ Օրենք)

• 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերով մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանվելու դեպքում միաժամանակ ներկայացվում են այդ տեղեկության վավերապայմանները:

• 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

• 10-րդ կետի համաձայն՝ նույն կարգի իմաստով շինարարական ծրագրերը ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա իրականացվող բոլոր տիպի շինարարական աշխատանքները.

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ.

• 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը.

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային

համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/62» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի՝

• 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

• 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում.

ա. մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը չի ներկայացնում իր կողմից կազմված նախահաշիվը (...):

• 5.3 կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

• 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Բողոքի քննության շրջանակներում «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից չվկայակոչվեց որևէ իրավանորմ, որի համաձայն մասնակիցների գնային առաջարկները չեն կարող պակաս լինել շինարարական աշխատանքների նախահաշվով սահմանված ինքնարժեքից:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից մատնանշված Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետին, ապա Խորհուրդը գտնում է, որ նշված կետը վերաբերում է մասնակցի հայտի գնային առաջարկով ներկայացված աշխատանքների ինքնարժեքին, այլ ոչ թե տվյալ ընթացակարգի նախահաշվով սահմանված աշխատանքների ինքնարժեքին:

Խորհուրդը գտնում է նաև, որ բողոքաբերի կողմից Բողոքով ներկայացված փաստական հանգամանքները չեն կարող խոչընդոտ հանդիսանալ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ նույն օրենքի նպատակը հանդիսացող՝ թե՛ գնումների գործընթացում հատուցման համարժեքության ապահովման, և թե՛ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման համար:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.03.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**